Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի ----------ի N ----------Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լուսաստղիկ- մսուր մանկապարտեզ>> և <<Լապտերիկ- մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	Տնօրենի թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը)
1	2	3	4	5
1. **2.**	**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն** **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լապտերիկ-մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն**	1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր բավարարում են՝ 1) <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին 2) Իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր): 2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝ 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն. 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն. 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ. 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն. 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն: **Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ սույն հայտարարության 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային Հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:**	Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող ընտրվել, նշանակվել այն անձը, որը՝ 1) <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր. 2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 4) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը. 5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: 6) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն. 7) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են. 7) 65 տարին լրացած քաղաքացիները:	1) դիմում. 2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի. 3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին. 4) ինքնակենսագրություն. 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները. 6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից. 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
Մրցույթներն անցկացնելու վայրը, օրը, ժամը,		**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը**
վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2023 թվականի օգոստոսի 24-ին ժամը՝ 11:00		**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի ոչ աշխատանքային օրերից**	**2023 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ:**